# ՔԱՂԱՔԱԿԱՆ ՌԻՍԿԸ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

*Ն.Բաղդասարյան, Գ. Մարուքյան*

Քաղաքական ռիսկը ցանկացած մակարդակի քաղաքական որոշումների անբաժանելի տարրն է, սկսած ամբողջ հասարակության հեղափոխական վերափոխումներից, վերջացած առանձին ընտրողի քվեարկությունից: Ռիսկային որոշումները ընդունվում են անորոշ իրավիճակներում և բնութագրվում օբյեկտիվ իրավիճակի և սուբյեկտիվ գործունեության փոխկապակցության տիպով: Այդպիսի որոշումների հաջողությունը կապված է ոչ միայն ենթադրությունից, «կանխատեսումից», այլ նաև կամային հատկությունից, վճռականությունից, իրավիճակի վերահսկողությունից, իրադարձությունների առջևից գնալու, ղեկավարելու վճռականությունից, որը արդյունք է այլընտրանքային որոշումների և օրինականության: Ռիսկը քաղաքական որոշումների անբաժանելի մասն է, քանի որ այն ընդունվում է սուբյեկտի կողմից, նրա ձևավորումը և իրականացումը կախված է վերջինիս սոցիալ-հոգեբանական բնութագրից: Իրավաբանական պրակտիկայում ընդունված է համարել, որ ռիսկը մշտապես անբարենպաստ հետևանքների վտանգ է պարունակում:

Պետք է նշել, որ Հայաստանում քաղաքական ռիսկի վերլուծությունը ունի որոշակի առանձնահատկություններ.

1/ Քաղաքական ավանդույթներ, դեմոկրատական ինստիտուտների անկատարություն, օրինականության բացակայություն: Ճգնաժամային պահերին մեծ դեր խաղաց նաև անհատի գործոնը, որին պետք է լրացուցիչ ուշադրություն դարձնել քաղաքական ռիսկի ժամանակ:

2/ Մեծ ազդեցություն է գործում նաև ռեգիոնների անհամաչափ զարգացումը, աղետի գոտու առկայությունը, արցախյան գործոնը, ինչը պահանջում է լրացուցիչ միջոցներ, որի հետևանքով մեծանում է արտաքին պարտքը:

Ընթացիկ գործոնը հաշվի առնելով՝ կարող ենք ասել, որ ՀՀ-ում առայժմ ռիսկի աստիճանը դեռ բարձր է, և այն կարելի է բնութագրել որպես անցման շրջանի ռիսկ:

Պետական քաղաքականության առաջնային տարրերը կապված են ռիսկերի կանխարգելման հետ: Ռիսկերի կառավարման գործում մեծ է օրինականության դերը , որը պետության մեջ կարգավորիչ ֆունկցիա է կատարում:

Ռիսկերի չափավորման առավել ժամանակակից մեթոդ է համարվում ԶԼՄ-ների գործունեությունը, որոնք հասարակությանը տրամադրում են օբյեկտիվ լրատվություն: Ռիսկերը կարող են նվազել հակասությունների լուծման միջոցով, որը կարող են ապահովել օրենքն ու դատական իշխանությունը:Սահմանադրության առկայությունը կարևորագույն հանգամանք է երկրում քաղաքական ռիսկերի չափը կանխատեսելու, այն կառավարելի դարձնելու համար: Այն պետություններում, որտեղ էլիտան չկարողացավ ճիշտ ժամանակին իր էթնոսին տանել սահմանադրական զարգացման ուղիով, նրանք ոչ միայն չկարողացան ապահովել հուսալի զարգացում, այլ նաև այդտեղ մեծացավ քաղաքական ռիսկի աստիճանը, ինչը բնականաբար բացասաբար է ներգործում երկրի զարգացման վրա: Այդ վիճակը հատուկ է տվյալ երկրին այնքան ժամանակ, քանի դեռ այնտեղ չի ստեղծվել կառավարման հուսալի համակարգ: Այստեղից կարելի է եզրակացնել, որ ցանկացած երկրի Սահմանադրություն պետք է հաշվի նստի որոշ կարևորագույն հանգամանքների հետ

ա/ աշխարհաքաղաքական իրավիճակի առանձնահատկությունները,

բ/ երկրի քաղաքական համակարգի համար բոլոր միջոցների ապահովում

Քաղաքական ռիսկի տեսությունը ուսումնասիրում է խնդիրների լայն շրջանակ. քաղաքական կայունության կանխատեսումից մինչև ոչ կոմերցիոն ռիսկերի գնահատում՝ կապված տարբեր սոցիալ- քաղաքական երևույթների գործունեության հետ:

Այսօր, երբ մեր երկիրը ձգտում է ինտեգրվել համաշխարհային տնտեսության մեջ, մեծ աշխատանքներ ունի քաղաքական ռիսկը կառավարելի դարձնելու գործում:

Միջազգային պրակտիկայում քաղաքական ռիսկի մակարդակի գնահատման ժամանակ ուշադրություն է դարձվում այնպիսի երևույթներին, ինչպիսիք են քաղաքական

պլյուրալիզմը, կրոնական ու էթնիկական խմբերի հակամարտության աստիճանը, իշխանության վերին էշելոններում կոռուպցիայի մակարդակը, քաղաքական անկարգությունների հնարավորությունը, ներքաղաքական անկայունությունը և այլն:

Ռիսկի գնահատումը և կանխատեսումը բավականին ինքնուրույն գործողություն է որոշումների ընդունման ասպարեզում, ինչը ենթադրում է որոշակի տեխնոլոգիաների կիրառում, որոնք կոչված են նվազեցնելու ռիսկը և նրա ազդեցությունը նպատակների մշակման և իրականացման վրա:

Ռիսկի նվազեցման կարևորագույն պայմանը իրավական պետության ստեղծումն է, ինչը հնարավոր է օրինականության պարագայում:

## ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔԸ ՈՐՊԵՍ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԵՎՈՐ ՊԱՅՄԱՆ

*Ն.Բաղդասարյան, Գ. Մարուքյան*

Մարդկության զարգացման մեծագույն նվաճումներից մեկը եղել և մնում է քաղաքացիների հավասարությունը օրենքի առաջ,որը հանրաճանաչ սկզբունք է և ամրագրվել է ինչպես բազմաթիվ օրենսդրական ակտերում, այնպես էլ ՀՀ.Սահմանադրությունում: Պետության կողմից ընդունված օրենքների կատարման գաղափարը առաջացել է անտիկ աշխարհում:

Դեռևս հին հունական փիլիսոփաներն ու իրավագետները խոսում էին այն մասին, որ օրենքը ստեղծված է ի կատար ածվելու համար (Dura Lex Sed Lex- Օրենքը խիստ է, բայց օրենք է) Պլատոնը իր "Օրենքներ" երկխոսություններում գրում է "Ես տեսնում եմ մոտակա մահը այն պետության, որտեղ օրենքը ուժ չունի և գտնվում է ինչ-որ մեկի իշխանության տակ: Այնտեղ, որտեղ օրենքը իշխող է իշխանավորների վրա և նրանք նրա ստրուկներն են, ես տեսնում եմ պետության փրկություն և բարօրություն, ինչպիսիք կարող են նվիրել աստվածները ":

Կանոնակարգված հասարակության մեջ գոյություն ունի պարզ և ճշգրիտ դասակարգում, ինչպես նաև որոշակի կապ օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների միջև: Ըստ Ռուսոյի օրինականության կարևորագույն խնդիրն այն է, որ պետք է ապահովվի հասարակության բոլոր խավերի երջանկությունը, ազատությունը, և հավասարությունը օրենքի առաջ: Օրինականությունը և ժողովրդավարությունը կարելի է բնութագրել որպես մեկը մյուսին լրացնող և իրարից անբաժան հասկացություններ: Չկա օրինականություն առանց ժողովրդավարության, և չկա ժողովրդավարություն առանց օրինականության: Օրինականությունը դա օրենքների և իրավական ակտերի խիստ և ամբողջական իրականացումն է օրենքների բոլոր սուբյեկտների կողմից: Գրականության մեջ օրինականության վերաբերյալ կան տարբեր բնորոշումներ: Օրինականության մեջ կարևորվում է մարդկանց՝ պետության նկատմամբ ունեցած իրավունքների և պարտականությունների լիակատար իրականացումը և ընկալումը:

Օրենք և օրինականություն հասկացությունները թեև մոտ են իմաստով, սակայն ունեն նաև զգալի տարբերություններ: Օրենքը օրինականության հիմքն է: Առանց օրենքի չի կարող լինել օրինականություն: Հարկ է նշել, որ տարաձայնություններ կան այն հարցի շուրջը, թե հասարակության որ խավն է օրինականության կրողը:Կարծիքներից մեկն այն է, որ օրինականությունը վերաբերում է պետական մարմիններին, ոչ պետական կազմակերպություններին, բայց ոչ երբեք մարդկանց, մյուս կարծիքն էլ այն է, որ օրինականության կրողը հենց մարդիկ են: Օրինականությունը առանձնանում է մի շարք հատկանիշներով: Օրինականության համընդհանրություն. ոչ ոք չի կարող խուսափել այն պարտականություններից, որոնք դրված են յուրաքանչյուրի առջև: Համընդհանրությունը, որպես օրինականության կարևորագույն հատկանիշ, հավասարապես վերաբերում է թե հասարակությանը, թե պետությանը: Համընդհանրությունը, որպես օրինականության բնորոշ հատկանիշ, նշանակում է օրենքների իրագործում պ ետության տարածքում գործող բոլոր պետական և ոչ պետական հաստատությունների կողմից:



Օրինականությունը սերտորեն կապված է օրենքի, իրավական նորմի հետ: Օրինականության ռեժիմի գնահատումը հնարավոր է միայն այն դեպքում, երբ պարզվի, թե ինչ չափով են օրենքրը արտացոլում հասարակության զարգացման պահանջները: Եթե օրենքները պաշտպանում են միայն առանձին անձանց կամ սոցիալական խմբերի շահերը, ապա նման պարագայում օրինականության հետևաբար նաև իրավական պետության մասին խոսք լինել չի կարող: Եթե օրենքները միայն ձևականորեն են արտահայտում հասարակության տարբեր խավերի շահերը, բայց չեն երաշխավորվում, այս դեպքում նույնպես օրինականությունը բացակայում է: Օրինականության նորմալ ապահովումը պայմանավորված է 2 հանգամանքներով. բացարձակ հստակ մշակված օրենսդրություն, որը կհամապատասխանի հասարակության առաջընթացի պահանջներին օրենքների, իրավական ակտերի լրիվ և բացարձակ կատարումը պետական մարմինների, իշխանավորների, բնակչության և տարբեր կազմակերպությունների կողմից:

Մարդկանց իրավունքների,ազատությունների,ազատ,անկախ և անկաշկանդ կյանքի կոչելը ապահովում է իրական ժողովրդավարություն:

Ժողովրդավարությունը ենթադրում է իրավունքների և պարտականությունների փոխադարձ կապ: Քաղաքացիներն ունեն իրավունքներ, բայց ունեն նաև պարտականություններ: Նրանք ազատ են անդամակցելու ցանկացած կազմակերպության և կարող են մասնակցել հասարակության հանրային կյանքին: Միաժամանակ նրանք կրում են այդ մասնակցությունից բխող պատասխանատվությունը: Իրավունքներն ու պարտականությունները միևնույն մեդալի տարբեր երեսն են: Իրավունքը նաև պարտականություն է. իրավունքի և պարտականության փոխհարաբերությունը ժողովրդավարության հաստատման ու զարգացման կարևոր պայման է:

## ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԵՏԱԽՈՒԶՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ (1918-1920 թ.թ.)

*Վ. Վիրաբյան*

1. Առաջին աշխարհամարտի ավարտը արմատական հեղաբեկումներ մտցրեց Անդրկովկասյան տարածաշրջանում, առաջադրեց նոր գեոպոլիտիկ խնդիրներ: Ռուսաստանում Հոկտեմբերյան հեղափոխությամբ առաջացած ցնցումները երկարատև բնույթ ունեին և իրենց ոլորտի մեջ առան նաև Հայաստանը: Հայկական Հարցի լուծման բոլոր հնարավոր տարբերակները մեկը մյուսի ետևից փլուզվեցին, նախկին պայմանավորվածությունները կորցրեցին իրենց երբեմնի ուժը և փոքրաքանակ ժողովուրդներին կանգնեցրին ճակատագրական երկընտրանքների առաջ: Այդպիսի անբարենպաստ աշխարհաքաղաքական և դժվարագույն ռազմական կացության մեջ առաջացավ Հայաստանի Առաջին հանրապետությունը (1918 թ., մայիսի 28), որի առաջնահերթ խնդիրներից մեկը դարձավ հետախուզության և հակահետախուզության գործի կազմակերպումը, քանզի ինչպես շատ դիպուկ նկատել է հայ առաջնակարգ հետախույզներից մեկը՝ Տիգրան Դեվոյանցը, «հետախուզությունը պետության աչքն ու ականջն է» (ՎէՄ, 1938, Զ տարի, թիւ 2, յունիս-մայիս, էջ 59):

2. 1918 թ. օգոստոսի 13-ին ՀՀ նախարարների խորհուրդը լսում է ռազմական նախարարության՝ իրեն միջոցներ տրամադրելու մասին հարցը՝ ծածկելու համար ավիացիայի, հետախուզության ու հակահետախուզության - ռադիոհեռագրի վրա ծախսված գումարները: Նախարարների խուրհուրդը, քննարկելով հարցը, որոշում է կայացնում տրամադրելու 6 միլիոն ռուբլի, ինչպես նաև բ) հետախուզության և գ) հակահետախուզության համար ...N միջոցներ (ՀՀ ՊԿՊԱ, Ֆ. 201, ց.1, գ. 484, թ.9): Պետք է նշել նաև Նախարարների խորհրդի 1919թ. սեպտեմբերի 1-ի նիստի մասին, որը հետախուզության և հակահետախուզության գործի կազմակերպման ծախսերի համար որոշեց հատկացնել 535 հազար ռուբլի, և միջնորդել պառլամենտի զինվորական հանձնաժողովի առաջ բաց թողնել այդ գումարը (ՀՀ ՊԿՊԱ, Ֆ. 199, ց.1, գ.100, թ, 194: գ. 249 թ.1) և այլն:

3. Հարկ է ընդգծել 1919թ. մայիսի 2-ի Գլխավոր շտաբի հետախուզական բաժանմունքի պետի պաշտոնակատար Յովան Խան Կոտուրսկու Գլխավոր շտաբի պետին ներկայացրած զեկուցագրի մասին, 1919թ. մայիսի 21-ի զինվորական նախարարության Գլխավոր շտաբի պետի ժամանակավոր պաշտոնակատար փոխգնդապետ Շնեուրի դիմումագրի մասին զինվորական նախարարին հետախուզական գործի կազմակերպման համար արտաքին գործերի նախարարության, նրա ներկայացուցչությունների և հետախուզական ծառայությունների միջև սերտ համագործակցության հաստատման, հայ հետախույզներին ցուցաբերվելիք աջակցության մասին:

Վերջապես պետք է հատուկ ընդգծել, որ 1920թ. մայիսի 8-ին ՀՀ Նախարարների խորհուրդը, լսելով զինվորական նախարարի զեկուցումը արտասահմանում հետախուզական և հակահետախուզական գործի կազմակերպման մասին, որոշում կայացրեց այդ գործունեությունը ենթարկել Հայաստանի դեսպանների հսկողությանը (Ֆ. 201, ց.1, գ.489, թ.62; Ֆ. 278, ց.1, գ.11, թ.16): Այդ ճանապարհին կարևոր քայլ էր ՀՀ դեսպաններին կից զինվորական կցորդների ,,ինստիտուտի ,, ստեղծումը, որի նախահաշիվը և գործելակերպի կարգը 1919թ. հունիս-հուլիսին արդեն հաստատված էր (ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 199, ց.1, գ.27, թ. 142-143):

4. Հարկ է նշել նաև, որ հետախուզության և հակահետախուզության ծառայությունների կազմակերպման բնագավառում որոշակի վաստակ ունեն գնդապետ Ս. Մ. Զինկևիչը, Ա.Կ. Շնեուրը, Յովան Խան Կոտուրսկին, Տիգրան Դեվոյանցը, կապիտան Վահագն Գալուստի Մուրադյանցը, Վրաստանում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցչությանը կից զինվորական վարչության ղեկավար գեներալ Քիշմիշևը և ուրիշներ:

Հարկ է նշել նաև Գլխավոր շտաբի հետախուզական բաժանմունքի ջանքերի մասին այդ բնագավառի համար կադրերի ձեռքբերման ուղղությամբ ձեռնարկված քայլերի մասին, որոնք նաև պետք է տիրապետեին ֆրանսերենին, անգլերենին, թուրքերենին (ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 204, ց.1, գ.104, թ.61), ինչպես նաև հանրապետության ռազմական և հատուկ ծառայությունների ղեկավար շրջանների փորձերի մասին՝ հանրապետության համար ռազմական կադրերի ուսուցման գործը կազմակերպելու Ֆրանսիայում 1920թ., դրա ձախողման մասին՝ կապված 1920թ. թուրք-հայկական պատերազմի և վերջինիս աղետալի հետևանքների հետ (ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 276, ց.1, գ.154, թ.222):

5. Գլխավոր շտաբի հետախուզական բաժնի պետը դրա ստեղծման պահից Ա. Կ. Շնեուրն էր: 1919թ. սեպտեմբերից մինչև 1920թ. ապրիլը հետախուզության գծով բաժանմունքի պետ էր կապիտան Վ. Գ. Մուրադյանցը (անկուսակցական), 1920թ. ապրիլից մինչև հունիսի վերջը՝ կապիտան Տ. Դեվոյանցը (ՀՅԴ անդամ), 1920թ. հուլիսից մինչև Հայաստանի խորհրդայնացումը (դեկտեմբերի 2-ը)՝ Մ. Դոդոխյանը, իսկ հակահետախուզության գործունեությունը վարում էր Նորին Մեծության Ռումինական ռազմաճակատի զորակայանին կից Սևծովյան նավատորմի հրամանատարի շտաբի հետախուզության և հակահետախուզության բաժնի նախկին պետ, ադմիրալ Կոլչակին գործերի բերումով անձամբ լավ ճանաչող, ծովակալության գծով սպա Արտեմի Նիկիտայի (Յովհաննեսով) Յովան Խան-Կոտուրսկին (ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 199, ց.1, գ.29ա, թ.215. ՀՀ ՀԿՔՓ ԿՊԱ, ֆ.91, ց.3, գ.3594, թ. 2-20 և այլն):

6. Տեղեկություններ էին հավաքվում ինչպես Հայաստանի ռազմաքաղաքական իրավիճակի մասին, այնպես էլ Դենիկինի Կամավորական բանակի, Սովետական Ռուսաստանի, բոլշևիկյան և քեմալական շարժման մասին, որոնք ներկայացվում էին ՀՀ վարչապետին, զինվորական նախարարին՝ ակնկալելով համապատասխան կարգադրություններ և որոշումներ՝ նպատակաուղղված Հայաստանի անվտանգության ապահովմանը:

Հարկ է շեշտել, որ ավաղ, այդ տեղեկատվությունը ոչ միշտ էր հաշվի առնվում, քանի որ քաղաքական ղեկավար շրջաններում մասնավորապես 1919թ. հունվարից մինչև 1920թ. սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսները ընկած ժամանակահատվածում իշխում էր նվիրվածության ոգին Անտանտին, սին հավատը Սևրյան որոշումների նկատմամբ, և հակադրվածությունը բոլշևիկյան Ռուսաստանի հետ, որի հետ ձգտում էր բարեկամական կապեր հաստատել հարևան թշնամի Թուրքիան:

7. Հարկ է նաև հատուկ նշել հետախուզության սպաների և աշխատակիցների մասնակցության մասին՝ մասնավորապես Հայաստանի մի շարք շրջաններում մահմեդա-



կան տարրերի, թուրք ու ադրբեջանական գործակալների դեմ մղված պայքարին: Այս առումով մասնավորապես պետք է նշել, օրինակ, գնդապետ Զինկևիչի և այլոց դերը վրաց-հայկական 1918թ. դեկտեմբերյան երկշաբաթյա պատերազմում, գնդապետ Ա. Կ. Շնեուրի ակտիվ մասնակցությունը 1919թ. սկզբի Զոդի հրաշալի օպերացիայում, որը նաև հայկական բանակի և հետախուզության փոխհամագործակցության լավագույն էջերից է, ինչպես նաև պորուչիկ Յովան Խան-Կոտուրսկու գործունեության մասին Շարուր-Նախիջևանում, Լազիստանում, կապիտան Տիգրան Դեվոյանցի այցի մասին Էրզրում, Վան և Թուրքահայաստանի մյուս կարևոր քաղաքները 1919թ. գարնանը և այլն (Ֆ. 204, ց.1, գ.132, թ.62 և այլն): Ֆինանսատնտեսական դժվարությունները, կադրային սովը, օպերատիվ աշխատանքի փորձի գրեթե բացակայությունը, կտրվածությունը նախկինում Հայաստանի հետ գեոպոլիտիկ հետաքրքրություն ունեցած Ռուսաստանից, նրա ուսումնական և ռազմաօժանդակ կառույցներից, ազգամիջյան փոխհարաբերությունների խեղդուկ միջավայրը և գերազանցապես արևմտամետ տրամադրությունները բումերանգի նման հարվածեցին՝ ի չիք դարձնելով հայկական հետախուզության և հակահետախուզության՝ այդչափ դժվարին պայմաններում ձեռք բերած որոշ արդյունքներ: Հայաստանի Առաջին հանրապետության հետախուզությունը և հակահետախուզությունը 1918-1920թթ. հնարավորին չափ ձգտել են կայանալ և իրագործել անհրաժեշտ աշխատանքներ երկրի անվտանգության ապահովման համար՝ գործելով շատ խճճված և բարդ աշխարհաքաղաքական միջավայրում, չունենալով հուսալի և իրական դաշնակիցներ:

## ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐԻ ԱՐԺԵՎՈՐՄԱՆ ՀԱՐՑԻ ՄԱՍԻՆ

*Ս. Յովհաննիսյան*

Այս կամ այն բնագավառին վերաբերող յուրաքանչյուր երևույթի՝ որպես պրոբլեմի, գիտական ուսումնասիրությունը ունի ոչ միայն զուտ տեսական, այլև գործնական նշանակություն: Բնականաբար, քաղաքական կանխատեսման պրոբլեմի գիտական հետազոտության անհրաժեշտությունը կարող է իմաստավորվել նաև գործնական քաղաքականության ոլորտում: Այս հանգամանքը կարելի է բացատրել բացառապես առարկայական դրդապատճառներով: Ուստի, անհրաժեշտ է արժևորել Հայաստանում քաղաքական կանխատեսումների վերաբերյալ հետազոտությունների կարևորությունը համազգային, պետական խնդիրներ շոշափելու և արդյունավետ լուծումներ գտնելու ներքոնշյալ տեսանկյուններից.

1. քաղաքական անկախություն ձեռք բերած Հայաստանի Հանրապետության (և Արցախի) ռազմավարական շահերը օբյեկտիվորեն պահանջում են, որ հայկական երկու անկախ պետությունները բոլոր առումներով ապահովագրվեն տարածաշրջանային ռազմա-քաղաքական անկանխատեսելի զարգացումների հնարավոր բացասական հետևանքներից,

2. քաղաքական, ռազմական և տնտեսական ինտեգրացիոն գործընթացները, որոնք ընթանում են արդի դարաշրջանում, Հայաստանից պահանջում են համեմատաբար արագ և ճիշտ ժամանակին արձագանքել համաշխարհային և տարածաշրջանային տարբեր բնույթի զարգացումներին,

3. որպեսզի Հայաստանը դուրս չմնա համամարդկային ինտեգրացիոն զարգացումների ուղին նախանշող ընդհանուր գործընթացներից, հարկավոր է ճանաչել և գիտականորեն իմաստավորել ոչ միայն անցյալն ու ներկան, այլև ապագան,

4. աշխարհում ընթացող ինտեգրացիոն աննախադեպ արդի գործընթացների պատճառով Հայաստանի (և ոչ միայն Հայաստանի) արտաքին քաղաքականության դերի շեշտակի աճը ենթադրում է ապագան կանխատեսելու գերակա խնդրի պետականորեն հաստատագրում և կարևորում,

5. ինչպես վկայում է Արևմուտքի զարգացած երկրների հարուստ և ակնառու փորձը, ներքին և արտաքին քաղաքականության բնագավառներում ժամանակային տարբեր միջակայքերում (ընթացիկ, կարճաժամկետ, միջնաժամկետ և այլն) կատարվելիք քաղաքական դեպքերին ու իրադարձություններին վերաբերող կանխատեսումները էապես կբարձրացնեն հայոց պետության վարկը աշխարհում ընդհանրապես, իսկ տարածաշրջանում մասնավորապես,

6. միջազգային հարաբերությունների ձևավորվող նոր համակարգի պահանջներից բխող համաշխարհային և տարածաշրջանային քաղաքականության զարգացման ընդհանուր միտումների գնահատումը կանխատեսման տարբեր մեթոդների ու մոդելավորումների օգնությամբ կարող է նպաստել Հայաստանի տեղի ու դերի հստակեցումը՝ ելակետ ունենալով ստեղծված և ապագայում ստեղծվելիք աշխարհաքաղաքական իրավիճակները,
7. քաղաքական կանխատեսումները հնարավորություն կընձեռեն մշակելու քաղաքական-տեսական տարբեր հայեցակարգեր, պլաններ, նախագծեր, ծրագրեր, որոնց օգնությամբ և կանխատեսումների միջոցով արտաքին քաղաքական (նաև տնտեսական) զարգացումների հնարավոր բացասական հետևանքների կանխման առումով Հայաստանը ժամանակին համեմատաբար ճիշտ հակաքայլեր կձեռնարկի,
8. քաղաքական կանխատեսումները թույլ կտան ոչ միայն ուրվագծել ապագայում կատարվելիք քաղաքական զարգացումների ընդհանուր միտումները, այլև դասակարգել ու համակարգել հնարավոր դեպքերի ու իրադարձությունների տարերային «ներխուժումը» ներկա իրականություն,
9. Հայաստանի պետական ներքին և արտաքին ռազմավարական շահերը դինամիկ և համադրված կերպով միջազգային հարաբերություններում և աշխարհաքաղաքական հակասությունների քաոսում պաշտպանելու նպատակով, անհրաժեշտ է քաղաքական կանխատեսումներով զբաղվող գիտահետազոտական կենտրոնների ու ինստիտուտների լայն ցանցի ստեղծում, որը ծանրակշիռ ծառայություններ կմատուցի պետությանը՝ ներկայացնելով վերջինիս քաղաքականության վերաբերյալ մոդելներ, այլընտրանքային ծրագրեր, զարգացման հնարավոր տարբերակներ և այլն,

Հայաստանի աշխարհագրական ոչ այնքան նպաստավոր դիրքը և հատկապես տարածաշրջանային աշխարհաքաղաքական հակասությունների անկանխատեսելի զարգացումները հնարավորին չափ կանխատեսելի դարձնելու խնդիրը պետք չէ անտեսել: Ուստի, վերը նշված հանգամանքները վկայում են, որ այնքան էլ արդարացված չէ գիտական-քաղաքական կանխատեսումների դերի թերագնահատումը ինչպես ներքին, այնպես էլ արտաքին քաղաքականության բնագավառներում: Այս տեսակետից ենթադրվում է, որ քաղաքական կանխատեսումների ինստիտուտի համար անհրաժեշտ նախադրյալների ստեղծումը Հայաստանում դրականորեն կարող են նպաստել օբյեկտիվ պատճառներով դեռևս սաղմնավորման փուլում գտնվող հայոց քաղաքագիտական կայուն մտքի ձևավորմանը:

## ГАЛИЛЕЙ – СОЗДАТЕЛЬ НОВОГО СТИЛЯ НАУЧНОГО МЫШЛЕНИЯ

*А. Геворкян*

Галилей является основоположником методологии классической науки, поскольку он выработал принципы нового стиля мышления.

В антисхоластическом движении развития науки следует выделить два стиля мышления: метафизический в лице Декарта и Лейбница и естественнонаучный - в лице Галилея и Ньютона. Ученые метафизического стиля мышления выступили против схоластики, но они науку понимали в метафизическом, спекулятивном, сугубо умозрительном смысле и с этой точки зрения занимали какое-то среднее положение между схоластикой и экспериментальной наукой.

Галилей впервые выдвинул новые требования к развитию науки, благодаря чему и стал основоположником нового стиля мышления. Эти требования можно резюмировать в следующих пунктах:
1. Еще Ф. Бэкон выразил важный методологический принцип, согласно которому истины природы следует искать скорее в состоянии искусственной стесненности явления, нежели в его свободном проявлении. Согласно этому убеждению, природу следует "разрезать", делить на части, т. е. изолировать исследуемое явление от наложенных на него побочных, сопутствующих других явлений, чтобы точнее выявить содержащуюся в нем закономерность. Следуя этому принципу, Галилей



впервые в явлении свободного падения увидел два наложенных друг на друга независимых явления: притяжение Земли и сопротивление воздуха. Он мысленно разделил их, чтобы точнее выявить закономерности свободного падения.
2. Если, согласно метафизическому стилю мышления, наука обязана ответить на всевозможные "почему", то Галилей ограничил цель науки. Так, в частности, Лейбниц считал необходимым для науки ответить на любые "почему". В частности, он утверждал, что если предположить, что мир вечно существовал и что в нем имеются одни и только шарики, то нужно дать объяснение, отчего мы здесь имеем шарики, а не кубики. Галилея же интересовал не вопрос "почему происходит свободное падение", а вопрос "как происходит оно, по каким закономерностям".
3. Если Декарт считал, что одними и теми же математическими принципами можно объяснить все физические явления, то Галилей был убежден, что каждое физическое явление должно быть исследовано в отдельности. Если Декарт самоуверенно заявлял, что найденными им математическими принципами можно удовлетворительно объяснить все явления, то Галилей и не пытался распространить какую-либо математическую закономерность на все физические явления. Галилей проявлял к каждому исследуемому явлению индивидуальный подход и весьма осторожно допускал какие-либо обобщения.
4. Если ученые метафизического стиля мышления под опытом понимали непосредственные чувственные наблюдения исследуемого явления, то Галилей под опытом имел в виду описание исследуемого явления посредством измеримых величин. Если для Декарта и Лейбница чувства судили о естественном явлении, то для Галилея чувства должны судить об измерениях, об опыте, а опыт, т. е. результаты измерений должны свидетельствовать о явлении.
5. Следуя своему естественнонаучному методу, Галилей воздерживался от каких-либо утверждений, если они не обоснованы тщательно проведенным экспериментом. В частности, он считает, что ни разум, ни рассуждения не в состоянии остановиться на признании мира либо конечным, либо бесконечным.

Проявляя самостоятельность мышления, Галилей отказывается от метода авторитета. В частности, выступая против авторитета Аристотеля, он уверенно критикует его, считая, что он ничем не уступает ему, ни чувствами, ни рассуждением, и более того, он видит больше в ночном небе, чем мог видеть Аристотель, поскольку он в 1600 г. впервые наблюдал ночное небо через телескоп, который сам изготовил. Представители официальной науки, главные должностные лица университета отказались даже посмотреть через телескоп, объявляя его сатанинским инструментом, обманывающим глаз. Он исправил некоторые ошибки Аристотеля. В частности, Аристотель считал, что, увеличивая радиус блока, можно получить выигрыш в стиле. Он считал, что широкие тела не тонут в воде. Он ошибался и в том, что два связанных кирпича упадут в два раза быстрее, чем один кирпич. Галилей смело критиковал и некоторые другие воззрения Аристотеля, в то время как другие абсолютизировали авторитет Аристотеля и никогда не подвергали сомнению какое-либо его воззрение. Достойным продолжателем дела Галилея в создании методологических основ классической науки был Ньютон.

## О КОНЦЕПЦИИ ПРЕДМЕТА "ФИЛОСОФИЯ НАУКИ"

*А. Геворкян*

Под наукой здесь подразумевается естествознание и, в первую очередь, физика, т. е. наука, имеющая теоретические (математические) и экспериментальные средства доказательства. Философия же не является наукой в строгом смысле, поскольку она не имеет никаких средств доказательства. Философия может лишь

обосновать, аргументировать, внушить, убедить, но не может доказать какую-либо основополагающую идею. Философия является систематизированной интерпретацией на теоретическом уровне.

Естественно, что наука может быть интерпретирована с самых различных точек зрения, следовательно, "Философия науки" как предмет может быть изложена на основе различных концепций, каждая из которых представляет определенную методологическую и культурную ценность.

Наука - многосложная система знаний, которая может быть интерпретирована с различных точек зрения, в различных срезах. Наиболее простой, естественной и доступной точкой зрения интерпретации науки является историческая, т. е. та точка зрения, которая в основе философии науки и параллельно с ней в истории философии и религии. Благодаря исторической концепции философии науки обеспечивается доступность и системность усвоения материала, которые необходимы при преподавании, поскольку слушатели курса не вынуждены для усвоения материала самостоятельно изучать историю науки и историю философии, которые необходимы в качестве предварительных знаний. В случае исторической концепции, лежащей в основе философии науки, рассматриваемый материал интерпретируется в динамике своего развития, чем обеспечивается преемственность различных теорий и стилей мышления, и легко избежать пробелов, которые препятствуют целостному восприятию курса. При иных концепциях философии науки затрудняется учет особенностей духовной атмосферы данной эпохи, без чего усложняется усвоение материала и возникают вопросы, без ответа на которые становится непонятным необходимость возникновения того или иного воззрения, а также поведение того или иного ученого в конкретной проблемной ситуации. Без исторического контекста современная наука не может быть понятна слушателю. Наука - многоэтажное здание, каждый этаж которого не похож на другие. С развитием науки подвергаются изменению не только уже построенные этажи, но и фундамент всего здания. Каждое научное открытие имеет многоаспектные последствия. Чтобы понять это сложное взаимодействие, необходимо проследить не только исторический контекст динамики науки, но и влияние на нее и других областей культуры, в частности, господствующей религии.

Философия отдельных областей знания предполагает профессиональную осведомленность в той же области знания. Например, невозможно заниматься философией искусства, не понимая и не зная самого искусства. Аналогично, философия науки требует знания истории не только от преподавателей этого предмета, но и от его слушателя. Философия же науки, изложенная на исторической концепции, содержит в себе не только теории, но и методологические новшества, примененные при их разработке. Если продолжить аналогию между наукой и строительством, можно сказать, что важно не только построение новых этажей науки, но и изобретение новых средств и методов строительства. Как правило, великие ученые разрабатывают новые методологические принципы, которые формируют новый стиль мышления.

## МОТИВАЦИЯ ТРУДОВОЙ ДЕЯТЕЛЬНОСТИ. СОСТОЯНИЕ И ТЕНДЕНЦИИ ИЗМЕНЕНИЯ

*С. Акопян, Э. Кюрегян*

Трудовая мотивация на данном этапе характеризуется следующими чертами: желанием работников иметь работу, которая стабильна и высокооплачиваема,



малоинтенсивна, не требует постоянного повышения квалификации и, самое главное, обеспечивает наиболее полное, а у некоторых работников минимальное удовлетворение первичных потребностей: социальный статус личности определяется далеко не по трудовым критериям; непривлекательность, непрестижность (общественных) мотивов труда, карьерного роста; общая трудовая пассивность. Данное состояние трудовой мотивации выражает кризис труда.

Одной из причин кризиса труда является нынешняя система стимулирования трудовой активности, которая малоэффективна также по причине того, что основывается на идее о выгодности дешевого труда. За счет уменьшения заработной платы осуществляется развитие хозяйства республики. Значительная часть работников государственных (и не только) предприятий республики не в состоянии полностью удовлетворить свои первичные потребности. Удовлетворение потребностей осуществляется при помощи доходов, получаемых не в ходе основной трудовой деятельности.

"Дешевый труд" характеризуется малопроизводительностью и способствует возникновению работника, не стремящегося к развитию и инициативности. Такой работник не в состоянии зарабатывать больше за счет повышения производительности труда. В результате тормозится научно-технический прогресс, а находящиеся и поддерживаемые на низком уровне условия труда и организация труда снижают работоспособность человека и ухудшают его здоровье.

"Дешевый работник" представляет опасность для окружающих, для общества. Ведь низкий уровень жизни, являющийся последствием дешевого труда, предопределяет потерю работником ответственности, и в итоге рождается человек, которому нечего терять не только перед обществом, но и перед собой и своей семьей.

В результате работник плохо, безответственно относится даже к своему здоровью. "Работники, получающие надбавки или льготы за неблагоприятные условия труда, прекрасно осознавая опасность для собственного здоровья, тем не менее часто выступают против их улучшения, предпочитая получение высоких компенсаций".

Все это позволяет считать дешевый труд очень дорогим для общества и государства.

Для трудового сознания на современном этапе характерна отчужденность труда, причины которой следующие: в связи с низкой заработной платой труд в общественном производстве не всегда дает возможность поддержания нормального уровня жизни; вследствие низкого уровня дисциплины (трудовой и производственной) выпускается продукция низкого качества, а ее производство сопровождается высоким уровнем травматизма; безответственное отношение к труду приводит к низкому уровню заработной платы; в современных условиях большинство из трудоспособного населения не может свободно выбирать места работы, интенсивность работы, социальную и профессиональную мобильность — все это позволяет заключить об ограниченном мотивированном поведении работника; в работниках большинство руководителей предпочитает не профессионализм и инициативность, а исполнительность и безотказность; система стимулирования трудовой деятельности неэффективна — труд оплачивается уравнительно, без учета личного вклада работника в конечные результаты деятельности коллектива; система стимулирования труда способствует "привязыванию" работников на местах с так называемым непривлекательным трудом — монотонным, малосодержательным, тяжелым, ручным, с вредными условиями и т. п., и как следствие, оплата труда здесь выше, чем на рабочих местах, требующих высококвалифицированных и инициа-

тивных работников, поэтому между размером заработной платы и содержательностью труда не наблюдается связи.

Отчужденность труда способствует трудовой пассивности. Работа в общественном производстве непривлекательна, потеряла значимость и не является социальной ценностью.

Большая часть трудоспособного населения согласна снизить уровень своих притязаний, сократить число первичных потребностей, так как нет реальных возможностей получить блага за честный, добросовестный труд. "Трудовая пассивность" сочетается с "потребительской пассивностью", в результате чего эта группа работников маловосприимчива к стимулированию.

Потеря интереса к повышению квалификации свидетельствует о трудовой пассивности. В структуре ценностных ориентаций учеба и творчество на последнем месте. При переходе предприятий на новые условия хозяйствования работники предъявляют все больше требований к повышению заработной платы, при этом не показывая никакого интереса к повышению квалификации.

В этих условиях активизацию работников необходимо связывать с материальной и имущественной зависимостью. Однако это правильно, когда эффективность труда определяет размер заработной платы. Но в современных условиях большинство предприятий не улучшили качества товаров, но подняли цены, и тем самым заработная плата работников выросла при сохранении организации и условий труда, технологии производства на том же низком уровне. Стала нарастать трудовая пассивность.

Отрицательные черты действующей системы материального стимулирования не дают значимых результатов в мотивации трудовой деятельности, так как последняя не поощряет развитие и полное использование способностей работников. Потенциал повышения трудового вклада используется далеко не полностью. В новых условиях хозяйствования основная функция оплаты труда — стимулирование работника к творческому труду - используется далеко не полностью.

Условия не дают возможности работникам поднять свою заработную плату за счет использования опыта и мастерства. Причина этого в сохранении принципов оплаты труда по тарифной системе, которая была и остается ориентированной на средние стандарты. Ей присущи нормированность квалификации, работы, профессиональная типизация, технологическая заданность. Эта система стимулирования не дает возможности использовать творческие способности. Особенно это касается тех сфер деятельности, которые способствуют внедрению научно-технических достижений и экономических реформ.

Несмотря на изменение политической и экономической системы, в обществе остается распространенным стереотип иждеивенческого экономического мышления, и именно в связи с этим трудовой коллектив не ищет возможностей заработать деньги, а пытается найти новые способы распределения имеющихся у коллектива средств.

Литература

1. Травин В. В., Дятлов В. А. Менеджмент персонала предприятия: Учеб.-практ. пособие.-3-е изд. — М.:Дело, 2000. —272с.

2. Прикладная социология и менеджмент: Хрестоматия / Сост. и научн. ред. А. И. Кравченко.- М.: Изд-во МГУ, 1998. — 512 с.



# ТРУДОВАЯ АКТИВНОСТЬ. ПУТИ ПРЕОДОЛЕНИЯ КРИЗИСА

*С. Акопян*

Трудовая пассивность, сформировавшаяся в 80-90-е годы в результате действовавшей системы хозяйственного механизма, продолжает оставаться и в наши дни.

Трудовая активность развивается только в тех случаях, когда "не подавляется" инициативность и предприимчивость. Прежняя (административно-командная) система "требовала" исполнительного работника, который: не считал достижения в труде основой для своего социального статуса; стремился к "консервативным формам" трудовой деятельности и вследствие этого работал с низкой производительностью; был ориентирован на коллективную ответственность и на "справедливого" начальника, "дающего" ему возможность получать блага при обязательном условии патерналистического послушания.

Для того, чтобы экономика действовала эффективно, требуется иной тип работника, так называемый "корпоративный" тип. Для этого работника характерны: инициативность, предприимчивость, обязательность и добросовестность, знание своих прав; ответственность как за свою судьбу, так и за судьбу своего коллектива; ориентация на максимальные достижения в труде; повышение квалификации в качестве основы для дальнейшего повышения заработной платы; способность к инновационной деятельности.

Мотивация работников при помощи экономических методов привела к тому, что работник стремился осуществить экономические интересы в другом месте (быть может, вне производства); вследствие деформированной системы мотивации трудовой деятельности переход республики к новым условиям хозяйствования не изменил отношения к труду, и не способствовал трудовой активности; "экономическая самостоятельность трудовых коллективов будет и в дальнейшем использоваться для реализации потребностей "для себя", преимущественно в оплате труда"; "узость" зоны мотивированного поведения диктует низкую трудовую активность; вследствие существующей системы хозяйствования социальная и профессиональная мобильность низкая. Система стимулирования, действующая на наших предприятиях, закрепляет работника на рабочем месте. Производство развивается при условии высокой степени социальной и профессиональной мобильности работника. Непрерывный стаж работы на одном предприятии имел огромное значение и способствовал тому, что без повышения квалификации, без отклонения от средних норм выработки работник через некоторое время мог получить определенные льготы и тем самым "привязывался" к рабочему месту.

Между руководителем и исполнителем должна быть определенная правовая основа, когда руководитель позволяет подчиненному самостоятельно выбирать определенное трудовое поведение, правда, при условии имеющихся четких правовых норм. Эта правовая основа не противоречит принципам руководства (единоначалия) на данном производстве. Права и ответственность должны быть четко распределены — это будет способствовать защищенности работника от администрации и коллектива. Это является не только предпосылкой для использования правовых методов управления в сфере труда, но также благодаря этому контролируемое и мотивированное поведение разграничены друг от друга. Именно данная правовая основа отношений руководителя и подчиненного становится одной из предпосылок развития трудовой активности.

Правовые отношения стали важными, когда предприятия приобрели экономическую самостоятельность в связи с переходом на новые экономические усло-

вия. В условиях прошлой командно-административной системы предприятие зависело от вышестоящего органа, дающего ему задания, распределяющего фонды, нормативы отчислений и т. п., и, как следствие этого, противоречие экономических интересов руководителей и работников теряло роль развивающего фактора, так как был образован союз, в котором руководители не заботились об организации и условиях труда, а работник не активизировал трудовые усилия. Но в современных условиях противоречия этих интересов обострилось. Разрешение этого противоречия позволит повысить эффективность труда. "Правовая основа трудовых отношений в этой ситуации выступает гарантом того, что формы разрешения противоречие будут носить гуманный характер". Предпосылкой для гуманизации труда в современных условиях должна стать система социальных гарантий, что означает, что любой работник должен иметь гарантированный минимальный размер заработной платы при "соответствующей мере труда"; оплата работника должна быть справедливой; в основе ее должен лежать принцип дифференцированного заработка в соответствии с личным вкладом работника в трудовой процесс; заработанные деньги должны иметь возможность "отовариться" на потребительском рынке; качество трудовой жизни должно быть определенного уровня, не ниже, чем у большинства работников той же категории (того же предприятия).

## Литература


1. Травин В. В., Дятлов В. А. Менеджмент персонала предприятия: Учеб.-практ. пособие.3-е изд. – М.: Дело, 2000. – 272 с.
2. Прикладная социология и менеджмент: Хрестоматия / Сост. и научн. ред. А. И. Кравченко.- М.: Изд-во МГУ, 1998. – 512 с.


# ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ՇՐՋԱՆՈՒՄ

*Ա.Ադիբեկյան, Ս.Այվազյան*

1. Մինչև 1991թ. Հայաստանի արդյունաբերության ոլորտի հիմքը կազմել են 750 միութենական ենթակայության ձեռնարկությունները (250-ը ռազմա-արդյունաբերական համալիրն էր՝ ՌԱՀ-ը)՝ իրենց սպեցիֆիկ արտադրական պրոֆիլով և բարձր ու նեղ որակավորում ունեցող գիտա-տեխնիկական աշխատակազմով: Քաղաքական անհեռատես քայլերի հետևանքով ձեռնարկությունները, այլևս չունենալով պատվեր, ուրեմն և՝ հումք, սպառման շուկա և ներդրումներ, հայտնվեցին «խաղից դուրս» վիճակում: Այդ շրջանում նույնիսկ հարց բարձրացվեց՝ Ռուսաստանում ընթացող ձեռնարկությունների կոնվերսացիային զուգորդվելու մասին: 1994թ. ռուբլու գոտուց արտաքսումը ի չիք արեց գործունեության նոր ասպարեզներ գտնելու ձեռնարկությունների հույսերը: Ըստ «Սոցիոմետր» անկախ սոցիոլոգիական կենտրոնի կողմից 2000թ. իրականացված հետազոտության, որի շրջանակներում ուսումնասիրվել են նախկին ՌԱՀ-ին պատկանող հանրապետության 125 արտադրական ձեռնարկություններ, վիճակը հետևյալն է.

| | Իրավիճակը | Ձեռնարկությունների թիվը | Մինչև 1994 աշխատող. թիվը | Հաստիքային աշխատող. թիվը | Աշխատանք ունեցողների թիվը |
|---|---|---|---|---|---|
| 1 | Աշխատում է անփոփոխ | 4 | 8.000 | 2.600 | 1.200 |
| 2 | Աշխատում է մասամբ կամ ոչ հիմնական պրոֆիլով | 19 | 40.000 | 4.450 | 2.060 |
| 3 | Չի աշխատում և չի աշխատի | 83 | 165.000 | 15.500 | 6.450 |
| 4 | Դժվար է գնահատել | 13 | 25.000 | 2.800 | 1.700 |
| | Ընդամենը | 125 | 240 000 | 25.350 | 12.350 |



Ընդհանուր առմամբ, այսօր արդյունաբերությունը կազմում են աշխատող մոտ 10 պետական մասնակցությունը ձեռնարկություններ, ՀՀ ՊՆ-ի ենթակայության տակ գտնվող մի քանի գործարաններ և մոտ ապագայում ՌԴ-ին պետական պարտքի դիմաց տրվող որոշ ձեռնարկություններ:

Այստեղ արտառոց ոչինչ չկա, քանի որ ՌԴ-ի ՌԱՀ-ը մնաց պետական սեփականություն և դրա ենթակայության ձեռնարկությունները կարող էին համագործակցել ԱՊՀ երկրների նմանատիպ ձեռնարկությունների հետ: Ինչ վերաբերում է Հայաստանին, ապա այստեղ այդ ոլորտի ձեռնարկությունների զգալի մասի սեփականաշնորհումը կոպիտ սխալ էր, քանզի այդ արդյունաբերությունը իր տեխնիկական մակարդակով և բնույթով անկարող էր ինքնուրույն գործել, այն էլ նոր շուկաներում:

2. Պարզ է, որ Հայաստանը դատապարտված է լինել արդյունաբերական երկիր, այն էլ նկատի ունենալով արտադրանքի ոչ մեծ ծավալները, այդ արդյունաբերությունը պետք է զարգանա յուրահատուկ գիտատար արտադրությունների ուղղությամբ: Վերջին 10 տարիների ընթացքում, փորձեր են արվել առաջադրել և իրականացնել տնտեսության զարգացման մի քանի այլ ուղղություններ, որտեղ Հայաստանը պատկերվում է որպես. (1) զբոսաշրջության, (2) քաղաքակրթությունների խաչմերուկ,(3) փոքր և միջին բիզնեսի երկիր:

Երեքն էլ հենվում են միջին բիզնես ունեցող տնտեսության վրա, ինչը անիմաստ է և անհնար, քանի որ, նախ ենթադրում է ընդամենը մոտ 1 մլն բնակչություն ունեցող երկիր և հետո՝ համակարգման համար անհրաժեշտ նախապայմանների բացակայություն:

Փոքր և միջին բիզնեսի ջատագովները, հենվելով Արևմուտքի փորձի վրա, մոռանում են, որ դա ճիշտ է՝ մեծ բիզնես ունեցող երկրի համար: Այսինքն, միայն այն դեպքում փոքր ու միջին բիզնեսը կարող են գոյություն ունենալ, երբ սպասարկում են խոշոր բիզնեսին[1]: Մասնավորապես, եթե, օրինակ, «Գրանդ Տոբակոն» Հայաստանի համար ընկալվում է խոշոր բիզնես, ապա իրականում, ասենք, Ֆրանսիայի համար այն ընդամենը միջինն է: Բացի դրանից, միջին բիզնեսը արտադրության համար երբեք չի կարող ապահովել մրցունակ գներով արտահանման անհրաժեշտ ծավալներ: Դրանից բացի, տնտեսության զարգացման նարտավարությունը միշտ հաշվարկվում է որոշ աշխարհաքաղաքական միջավայրի համար, ինչը ենթադրում է միայն խոշոր բիզնեսի առկայություն:

3. Փաստորեն, այսօր խոշոր արդյունաբերությունը առայժմ կարող է լինել որպես պետական մենաշնորհ, քանի որ այս ոլորտում ցանկացած սեփականաշնորհում հանգեցնում է կամ քայքայման, կամ էլ լավագույն դեպքում՝ մի քանի ձեռնարկությունների մասնատվելու և արտադրության վերապրոֆիլավորման:

Այսպիսով, խոշոր արդյունաբերության զարգացման համար, պետությունը պետք է պահպանի իր մենաշնորհային դերը և ապահովի միջպետական համաձայնագրերի իրականացումը, որպես այդ ոլորտում արտադրական գործընթացների գլխավոր խթանիչ: Այս մոտեցումը բավական իրատեսական է, քանի որ հիմնված է գործնական ձեռքբերումների վրա: Անհասկանալի պատճառներով, նման դեպքերը, կանոն դառնալու փոխարեն, շարունակում են դիտվել որպես բացառություն: Նույն խնդրին է վերաբերում նաև օտարերկրյա խոշոր ներդրողների համար նախատեսված՝ արտոնյալ պայմանների ստեղծումը: Իհարկե, օրենքի առջև բոլորը հավասար են, սակայն խոշոր բիզնեսը «ավելի հավասար է»:

Խոսելով արդյունաբերության զարգացման մասին, չգիտես ինչու, ենթադրում ենք անպայմանորեն դրա ծավալում ու զարգացում Հայաստանի սահմանների ներսում: Այնինչ իրականում հարյուրավոր դեպքեր կան, երբ մեր հայրենակիցները գործ են դնում արտասահմանում և, դժբախտաբար, ոչ միշտ համատեղ ձեռնարկության կարգավիճակով: Այստեղ զգացվում է պետության միջամտության բացակայությունը, այնինչ այդ միջամտությունը կարող էր ուղղված լինել արտադրությունից ստացվող եկամուտների մի մասի՝ դեպի Հայաստան ներհոսքին:

Հետևաբար, բոլոր այն պնդումները, թե իբր Հայաստանում կամ նրա օժանդակությամբ չեն կարող գործել խոշոր արդյունաբերական ձեռնարկություններ, անհիմն ու կոր-

[1] Այն, որ կա ուղղակի կապ բիզնեսի այս երեք տեսակների միջև, խոսում է, թեկուզ այն, որ միջին բիզնեսի ստանդարտները, կախված երկրից, տատանվում են և հասնում մինչև հազար աշխատատեղի:

ծանարար են: Ավելին, արտաքին առևտրային բացասական սալդոն հնարավոր է դրական վերածել միայն խոշոր արտադրությունների ծավալման դեպքում:

Դժբախտաբար, այսպես կոչված նոր «ժողովրդավարական պետական համակարգը» չի կազմավորվել ստեղծարար գործունեության համար և առավել ևս չի ծառայում դրան, իսկ պետության համար հիմնականում պահպանվել են վերահսկողական ֆունկցիաները: Զարմանալին այստեղ այն է, որ փորձում են պայքարել որոշ իբր արգելակող երևույթների, օրինակ, կոռուպցիայի դեմ, առանց կառավարման համակարգի արմատական փոփոխության: Ստեղծարար ֆունկցիայի հանդես գալը թույլ կտա իրապես գնահատել կառավարության գործունեությունը և այդ գործունեության արդյունավետությունը կդառնա հասարակության հիմնական թիրախը:

## ՍՈՑԻԱԼ-ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՄԹՆՈԼՈՐՏԸ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՈՒՄ

*Վ.Շամիրյան, Է.Կյուրեղյան*

Ձեռնարկության սոցիալ-հոգեբանական մթնոլորտը, որպես երևույթ, ներկայացնում է աշխատանքի պայմանների, շարժառիթների, մարդկային հարաբերությունների արտացոլումը աշխատողների հույզերի, ապրումների, տրամադրությունների մեջ:

Սոցիոլոգիական և սոցիալ-հոգեբանական հետազոտություններում, արտադրական ձեռնարկությունների հոգեբանական մթնոլորտը, մի կողմից անմիջականորեն ամրագրվում է ուղղահայաց (ղեկավար-ենթակա) և հորիզոնական (ենթակա-ենթակա) միջանձնային հարաբերությունների միջոցով: Մյուս կողմից, միջնորդավորված այդ մթնոլորտը կարող է ամրագրվել այնպիսի ինֆորմացիայի օգնությամբ, ինչպիսիք են տեղեկությունները կադրերի հոսունության, արտադրանքի որակի և քանակի, բացակայությունների և ուշացումների, ինչպես նաև բժշկական ծառայության, ժողովներում արտահայտված կարծիքների և դիտողությունների, աշխատանքից ազատվողների շարժառիթների վերաբերյալ և այլն:

Հայաստանյան ներկա զարգացումներում, երբ, թեկուզև հակասականորեն, սոցիալ-տնտեսական ու աշխարհաքաղաքական բարդագույն պայմաններում արմատական տեղաշարժեր են կատարվում տնտեսակարգի մեջ, երբ դժվարությամբ ուղի է հարթում մրցակցային, շուկայական կյանքը, նոր պայմաններում վերագործարկվող և ձևավորվող արտադրություններում նորովի է կարևորվում ձեռնարկությունների սոցիալ-հոգեբանական մթնոլորտը, որպես արտադրողականության և արտադրանքի որակի գործոն:

2000 թվականի ընթացքում, ներկայումս Չարենցավանում գործող մի շարք արտադրական օբյեկտներում անցկացրել ենք սոցիալ-հոգեբանական մթնոլորտի սոցիոլոգիական ուսումնասիրություն: Նպատակն էր պարզել սոցիալ-հոգեբանական մթնոլորտի ազդեցությունը աշխատանքի կազմակերպման և արդյունքների վրա: Ենթադրվել էր, որ աշխատողների միջև ուղղահայաց և հորիզոնական, պաշտոնական և ոչ պաշտոնական հարաբերությունների դրական բովանդակությունն ու ուղղվածությունը, ինչը առողջ սոցիալ-հոգեբանական մթնոլորտի գործիքներից են, արդյունավետ աշխատանքի և դրանից բավարարվածության նախապայմաններն են:

Հարցազրույցների ընթացքում, մասնավորաբար, 5 միավորանոց սանդղակով գնահատվել են անմիջական ղեկավարի և ձեռնարկության տնօրենի կառավարչական ու կազմակերպչական որակները, միջանձնային ուղղահայաց և հորիզոնական հարաբերություններից բավարարվածության աստիճանը, պոտենցիալ հոսունությունը, աշխատանքային պայմաններից բավարարվածությունը և այլն:

Հարցվել են մոտ 200 աշխատող (այդ թվում ղեկավար անձնակազմից):

Հարցման արդյունքների անմիջական ղեկավարի կազմակերպականառավարչական ունակությունների միջին հաշվեկշռված արժեքը կազմեց 2.8 միավոր, տնօրեններինը՝ մոտ 3.0 միավոր: Աշխատողների միայն 25 տոկոսն էր, որ անմիջական ղեկավարին և 20 տոկոսը՝ տնօրեններին համարում հեղինակավոր և օրինակելի անձնավորություն: Ամրագրվեցին նաև փոխադարձ անվստահությունը միմյանց հանդեպ (4.2 բալ) և հոռետեսական հայացքները ձեռնարկությունների ապագայի նկատմամբ (4.1 բալ):



Ձեռնարկությունների օբյեկտիվ տվյալների և իրավիճակի հետազոտումը ցույց տվեց, որ ժամանակին (90-ականների սկզբին) բազային տեխնոլոգիաների և տեխնիկայի փոշիացումը, ժամանակակից տեխնոլոգիաների ձեռք բերման դժվարությունները (երբեմն անհնարինությունը), անբավարար ուշադրությունը հոգեբանական և սոցիալական գործոնների հանդեպ նորովի, շուկայական տնտեսության թելադրանքով աշխատանքի կազմակերպման մեջ անկսղողությունները հագեցրել են նրան, որ, նաև սուբյեկտիվ պատճառներով շատերը մատնված են պարապուրդի, իսկ ձեռնարկությունների ապագան՝ անորոշության և անհեռանկարայնության:

Այսօրինակ հետազոտությունները անառարկելիորեն վկայում են, որ հայաստանյան ներկա, նույնիսկ անցումային պայմաններին, առավել ևս ապագայում, առանց բարոյահոգեբանական մթնոլորտի համակողմանի հետազոտման, աշխատանքի կազմակերպման և կառավարման մեջ հաշվառման, անհնար է մրցունակ արտադրության կազմակերպումը և արտադրանքի թողարկումը:

## ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԲԱԽՈՒՄՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԳՈՐԾԻՔ

*Կ. Գևորգյան*

Բանակցությունը մարդկային հաղորդակցման հնագույն և համընդհանուր միջոցներից մեկն է, որը հնարավորություն է տալիս համաձայնության հասնել այն դեպքում, երբ շահերը հակադրվում են, երբ հայացքներն ու տեսակետները տարբեր են: Պատմականորեն բանակցությունները կիրառվել են երեք հիմնական ոլորտներում՝ դիպլոմատիկ, առևտրական և բախումների լուծման ընթացքում:Ավելի հաճախ բանակցությունների անհրաժեշտությանն են հանգում այն, ժամանակ, երբ հակադրվելն անարդյունավետ է և ապարդյուն: Սակայն բանակցությունների սեղանին են նստում ոչ միայն լարված իրավիճակի առկայության դեպքում, այլև դրանից խուսափելու և հարաբերությունները դեպի համագործակցություն տանելու նպատակով: Չի բացառվում, որ համագործակցության մտադրված բանակցություններն ավարտվեն կողմերի լուրջ տարաձայնություններով և, որ արդյունքում բախում առաջանա:

Բանակցության կարևորությունն է հասնել կողմերի համար ընդունելի՝ *համատեղ որոշումների*: Յուրաքանչյուր կողմ ինքն է որոշում ընդունել, թե՝ ոչ այս կամ այն առաջարկը: Հակառակ դեպքում, կողմերից մեկին պարտադրված որոշման իրականացումը երաշխավորված չէ, հնարավոր է վերադարձը մեկնակետին և լարվածության էսկալացիան: Այսպիսով, միայն համատեղ, միացյալ որոշումն է, որ կողմերը կդիտարկեն որպես լավագույնը տվյալ իրավիճակում:

Գոյություն ունեն բանակցությունությունների դասակարգման զանազան կարգեր: Դրանք կարելի է առանձնացնել, ելնելով մասնակից կողմերի *նպատակներից՝ ա)* բանակցությունություններ գործող պայմանագրերի երկարացման համար, *բ)* բանակցությունություններ հարաբերությունների կանոնավորման մասին: Դրանք անցկացվում են բախումների դեստրուկտիվ տեսակից կոնստրուկտիվին անցնելու համար: Հաճախ այս բանակցություններում հանդես է գալիս երրորդ, միջնորդ կողմը, *գ)* բանակցություններ բարիքների վերաբաշխման շուրջը: Կողմերից մեկը իր օգտին փոփոխություններ է պահանջում: Մյուս կողմը, ի պատասխան, դիմում է սպառնալիքներին, *դ)* բանակցությունություններ նոր պայմաններ ստեղծելու նպատակով: Դրանց նպատակն է նոր տեսակի փոխհարաբերությունների հաստատումը, նոր պայմանագրերի կնքումը, *ե)* բանակցությունություններ երկրորդական արդյունքների համար: Սրանց նպատակն է ամրապնդել հարաբերությունները, ցուցադրել բարի կամքը, ինչպես նաև շեղել ուշադրությունը:

Բանակցությունությունների ֆունկցիաները համապատասխանում տն դրանց առջև դրված նպատակների իրականացմանը: Ըստ այդմ էլ առանձնացվում են բանակցությունների տարբեր ֆունկցիաները՝ տեղեկատվական, կոմունիկացիոն, ուշադրության շեղումը, վերահսկում, պրոպագանդա, գործողությունների հակարգում:

Բանակցությունների վերջում կողմերը կարող են հանգել երեք տեսակի համատեղ որոշումների՝ փոխզիջումային կամ, այսպես կոչված, «միջին գիծ բռնող», ասիմետրիկ՝ փոխզիջման նկատմամբ, համագործակցման միջոցով սկզբունքային նոր որոշում:

Բանակցությունները հաջող ընթացք կունենան որոշ չափանիշների առկայության դեպքում, մասնավորապես՝ եթե հնարավոր լինի հաստատել նախ պահանջների օրինական բնույթը և հավասարակշռել զիջումները:

Սակայն ավելի հաճախի են այն իրավիճակները, երբ չափանիշները ստույգ չեն, կողմերը ի վիճակի չեն գտնելու «միջին գիծը»: Այս դեպքերում անհրաժեշտ է հետազոտել հետաքրքրությունների դաշտը, զգալի զիջումներ կատարելով պակաս կարևորություն ունեցող խնդրի շուրջը, բանակցության շրջահայաց կողմը ձեռք է բերում ավելին իր համար մեծ հետաքրքրություն ունեցող հարցի շուրջ: Արդյունքում, տեղի է ունենում զիջումների «փոխանակում» այն դեպքում, երբ կողմերը նաև չեն անցել իրենց համար նշանակություն ունեցող արժեքների, հետաքրքրությունների սահմանը: Այս սկզբունքը կոչվում է «Պարետոյի սկզբունք»: Երբ կողմերի կարգավիճակը, իշխանության հնարավորությունները, ինչպես նաև շահերը թույլ չեն տալիս գտնել «միջինը», ապա նրանք հանգում են ասիմետրիկ որոշման: Այս դեպքում կողմերից մեկի զիջումները գերազանցում են մյուսին, սակայն վերջինս գիտակցորեն ընդունում է դրանք, ավելինը կորցնելու սպառնալիքի տակ: Երրորդ տեսակի որոշման դեպքում կողմերը համատեղ ջանքերով կարողանում են հաղթահարել *սեփական* շահը, նպատակը, հետաքրքրությունների սահմանը ու գտնել *սկզբունքային նոր* որոշում՝ դարձնելով իրենց միջև գոյություն ունեցող հակամարտությունը ոչ էական: Նոր, սկզբունքային որոշման գտնելը առավել բարդ պրոցես է, կապված լինելով արժեքների համակարգի վերանայման հետ: Այն պահանջում է խնդրի դիտարկում ավելի ընդարձակ հեռանկարում և ոչ ստանդարտ մոտեցում ու դրանով հանդերձ բացահայտում է բոլորովին այլ հնարավորություններ:

## ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՌԱՋԸՆԹԱՑԻ ՍՈՑԻԱԼ-ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՄԵԿ ԽՆԴԻՐ

*Ռ. Օհանջանյան*

Գիտատեխնիկական առաջընթացն ապահովող ամենակարևոր գործոններից է կադրային պոտենցիալը, որի ձևավորման հիմնախնդիրները բացահայտելու, անհրաժեշտ մակարդակն ապահովելու ուղղությամբ տարվող գործնական աշխատանքներ կազմակերպելու համար էական նշանակություն ունեն մասնագիտական կողմնորոշումների, մասնավորապես՝ տեխնիկական մասնագիտությունների նկատմամբ կողմնորոշումների ուսումնասիրությունները: Սոցիոլոգիական հետազոտությունները ցույց են տալիս, որ հետխորհրդային շրջանում, ԱՊՀ երկրների մեծ մասում մասնագիտական կողմնորոշումները և դրա տարրերից մեկը՝ բարձրագույն տեխնիկական կրթություն ստանալու դրդապատճառների ձևավորումը տեղի էր ունենում տարերային կերպով: Սակայն Ռուսաստանն արդեն սկսել է լուծել այդ խնդիրները: Այդ թեմաներով սոցիոլոգիական և հոգեբանական հետազոտություններ են կատարվում:

Հայաստանում պետական տնտեսական հաստատումների աշխատանքների հիմնական ուղղությունը գիտատեխնիկական առաջընթացի ֆինանսական, նյութական և ինստիտուտային կազմակերպումն ապահովելն է: Մինչդեռ, մասնագիտական կողմնորոշումների, այսինքն, մարդկային գործոնի անտեսումը կարող է հանգեցնել տնտեսական մեծ կորուստների և դանդաղեցնել ՀՀ-ի տեխնիկական առաջընթացի տեմպերը:

Վերջին տասնամյակում գիտության բազմաթիվ բնագավառներում հիմնարար հարցերի ուսումնասիրման հնարավորությունների սահմանափակությունը դրսևորվում է նաև սոցիոլոգիայում, հոգեբանության և մանկավարժության մեջ և այս հարցերի ուսումնասիրման ավանդույթներն են անգամ մոռացության մատնվել: Չնայած, բազմաթիվ հիմնարար թեմաներ, այդ թվում մասնագիտական կողմնորոշումներն ուղղակի գործնական նշանակություն ունեն, այնուամենայնիվ ՀՀ-ի գիտատեխնիկական զարգացման գործում դրանց նշանակությունն անուշադրության է մատնված: Հարկ է ուղիներ փնտրել ծավալելու այդ բարդ սոցիալ-հոգեբանական երևույթի՝ տեխնիկական մասնագիտությունների նկատմամբ կողմնորոշումների ուսումնասիրությունները, մասնագիտական կողմնորոշումների ձևավորման գործընթացն անհրաժեշտ ուղղով կազմակերպելու նպատակով:

ՀՊՃՀ-ն - Հայաստանի բարձրագույն տեխնիկական կրթությունն ապահովող առաջատար հաստատությունից է և հարկ է, որ ակտիվորեն ձեռնամուխ լինի այդ կարևոր հիմնախնդրի գիտական ուսումնասիրման կազմակերպմանը:



## ЭКОНОМИЧЕСКОЕ БЫТИЕ СВОБОДЫ

*Г. Акопян, Э. Акопян*

(Ванадзор)

Свобода - одна из основных философских категорий, характеризующих сущность человека и его существование. Она проявляется в возможности личности мыслить и поступать в соответствии со своими представлениями и желаниями, а не вследствие внутреннего или внешнего принуждения.

Чрезвычайно широк диапазон сводобы. Она многогранна и охватывает различные сферы жизни человека и общества.

Хотя она относится к числу тех проблем, которые довольно всесторонее изучены в научно — философской литературе, все же некоторые ее аспекты нуждаются в дальнейшем исследовании. Это относится прежде всего к экономической свободе. Интерес к этой проблеме обусловлен переходом от командно — административной экономики к рынку. Рыночная экономика в отличие от первой предполагает в первую очередь свободу предпринимательства, свободу от государственного произвола, свободу от внеэкономических критериев принятия экономических решений.

В этом смысле рынок не только механизм, но и сложный социокультурный феномен, предполагающий определенную культуру хозяйственного поведения, развитые трудовые и предпринимательские мотивации, деловую этику. Формирование этого феномена без свободной деятельности невозможно.

Благодаря свободе прежде всего обеспечивается эконимический суверенитет в производстве, т.е. такая степень автономности воспроизводства, которая определяется границами свободы принятия хозяйственных решений и присвоения результатов их реализации.

Именно на основе этого суверенитета преодолевается "гаечно — винтичное" положение работника в его непосредственном производственном процессе, тяжелые, нечеловеческие условия труда, обеспечивается свободная его динамика со свободным выбором места и форм приложения своих трудовых усилий. С другой стороны, экономический суверенитет открывает широкие возможности свободного предпринимательства, свободного расширения хозяйственной деятельности, свободной рыночной экспансии. Последняя проявляется в Великих географических открытиях, формировании новой Ойкумены - всемирного рыночного хозяйства, формировании современной технологической цивилизации.

Экономическое бытие свободы тесно связано также с состоянием денежного обращения. Деньги — кровь экономики. Несвободное, стиснутое, болезненное обращение денег не позволяет свободно развиваться и всему хозяйственному организму.

История знает много примеров, когда удачная денежная реформа дала мощный импульс хозяйственной активности. Предприниматель свободен лишь тогда, когда он свободно тратит деньги, свободно может овратить финансовые ресурсы в производственные. Трудящийся — потребитель может быть свободен лишь если

он в состоянии в любой момент обратить заработанные деньги в необходимые ему товары и услуги. Одним словом твердые деньги – это отчеканенная экономическая свобода, а всякого рода карточки, фонды, лимиты, талоны, визитки – это тиражируемая несвобода.

Экономическое бытие свободы охватывает также возможность свободного выбора организационных форм, партнеров, источников финансирования, альтернативных производственных и инвестиционных программ, возможность свободы от неправовых форм хозяйственного поведения, от нечестной конкуренции, лживой рекламы, косного рутинерства и бездумных новаций, от консерватизма и ультрарадикализма. Одним словом свобода так всестороннее и масштабно охватывает производственный процесс и весь хозяйственный механизм, что ее можно назвать непосредственной производительной силой.

## ГНОСЕОЛОГИЧЕСКИЙ АНАЛИЗ ФОРМАЛЬНОГО КОМПОНЕНТА АРГУМЕНТАТИВНОГО ПРОЦЕССА

*Г. Габриэльян*

Аргументация как процесс применяется как в теориях, насыщенных формально-логическим или математическим аппаратом, так и в теориях, лишенных этого аппарата. С этой точки зрения аргументация может иметь формальный или содержательный характер. Поэтому нам представляется возможным говорить о формальной компоненте аргументативного процесса. В одной из предыдущих наших работ обоснована мысль о формальном содержании научных теорий и их разновидностях. Мы считаем, что формальное содержание научных теорий может быть математического либо логического типов. Отсюда следует, что и аргументация в одних теориях должна выступать либо как аргументация логического типа, либо как аргументация математического типа. Чтобы конкретно говорить об этих разновидностях, следует рассмотреть вопрос о тех формах, в которых может выступать процесс формализации. С точки зрения Д. П. Горского, формализация может выступать в гносеологическом, широком и узком смыслах слова. Далее показывается, что аргументативный дискурс в этих теориях может выступать в гносеологическом, широком или узком смыслах слова. Это будут разновидности аргументации по форме. Итак, аргументация по содержанию может быть математического или логического типов, а по форме она выступает в указанных трех формах. В целом, она является формальной компонентой аргументативного процесса.

Эта формальная компонента выполняет определенную гносеологическую задачу, т. е. нечто отражает. Действительно, если с их помощью нечто обосновывается, доказывается, следовательно, они несут в себе отражательную функцию. Поэтому представляется возможным говорить об отражательной функции аргументативного дискурса. Надо учесть также, что в роли дискурса может выступать и целая научная теория. Таким образом, можно говорить об отражательной функции дискурса, как развитой системе аргументов. Основываясь на предложенных Д. П. Горским этапах формализации в гносеологическом, широком и узком смыслах слова, можно предложить этапы аргументации в гносеологическом, широком и узком смыслах слова. Под аргументативным дискурсом в гносеологическом смысле слова следует понимать систему аргументов, которая позволяет упростить изучаемую ситуацию, обеспечивает более простую ориентировку в окружающей среде. Под аргументацией в широком смысле слова следует понимать такой дискурс, который позволяет формулировку правил по отношению к изучаемым объектам заменять формулировкой правил по отношению к символическим выражениям, их заменяющим.

Аргументативный дискурс в узком смысле слова является системой аргументов, который применяется в математических и логических теориях и обеспечивает формализацию в узком смысле слова. Можно говорить об общих правилах, законах построения любого вида аргументации. Это, по существу, язык аргументации, который будет единым для любого аргументативного дискурса. Однако конкретное построение определенного аргументативного дискурса можно трактовать как построение речи аргументации. Аргументацию можно трактовать как аргументацию диалектическую и как формально-логическую.

## ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ, ԲԱՆԱԿԸ ԵՎ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 1918-1920 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

*Վ. Վիրաբյան*

1. Հայաստանի Առաջին հանրապետության կազմավորումը և զարգացումը տեղի էր ունենում պատմաքաղաքական դժվարին պայմաններում: Առաջին հերթին անհրաժեշտ էր ստեղծել բանակ, առանց որի ոչ մի պետություն իրապես պետություն չէ, և չի կարող լիարժեքորեն իրագործել ներքին ու արտաքին քաղաքականություն: 1918թ. հունիսի 15-ից սկսվեց ռազմական նախարարության կազմավորումը, և, հետևաբար, նաև իրական հողի վրա դրվեց բանակի, նրա տարբեր ստորաբաժանումների կազմակերպման հարցը:

2. Ռազմական մի տեղեկագրի համաձայն, զինվորական ծառայության մեջ գտնվողների թիվը 1919թ. գարնանը կազմում էր մինչև 16 հազար մարդ, իսկ Հայաստանի Առաջին վարչապետ Հովհ. Քաջազնունու (որի երկու որդիները, որպես Հայկական բանակի զինվորներ, կռվեցին ու զոհվեցին հայրենիքի ազատության և անկախության համար մղված 1918թ. Ղարաքիլիսայի ճակատամարտում և 1920թ. Զանգիբասարի ներքին կռիվներում, իսկ երրորդը Կարսի տակ մղված մարտերում գերվեց թուրքերի կողմից) հուշագրի տվյալներով, որը ներկայացվել է ԱՄՆ-ի կառավարության հայեցողությանը, հայոց զորքը կազմված էր բոլոր տեսակի զորատեսակներից, իսկ զորքի ընդհանուր թիվը 1919թ. հուլիսի վերջերին հասնում էր 18 հազարի (Ճարտարագետ, թիվ 35, 1999, էջ 5):

Դժվար է սակայն համաձայնվել Կ. Սասունու բերած տվյալների հետ, ըստ որի Հայկական բանակի թվաքանակը հասնում էր 35 հազարի, ինչպես նաև Ռուբեն Տեր-Մինասյանի բերած 34 հազար, ԳԱ 8 հատորյակի 7-րդ հատորի բերած 40 հազար, առավել ևս Հայաստանի պառլամենտի անդամ Հակոբ Տեր-Հակոբյանի 55 հազար թվերի հետ: 16-17 հազար թիվն ընդունելի է համարվում Ս. Վրացյանի կողմից, որի մասին նա նշում է իր 1919թ. մայիսի 18-ի նամակում: Միանգամայն այլ է պնդել, որ ինչպես արձանագրվում է մի արխիվային փաստաթղթում, Նորին Մեծություն Բրիտանիայի կառավարությունը կամենում էր հայկական բանակն ապահովել 40 հազարանոց զինվորության համար նախատեսված զենքով, զինամթերքով և հանդերձանքով (ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց.1, գ. 498, թ. 768 ): Միաժամանակ բանակը ըստ ՀՀ 2-րդ վարչապետ Ալ. Խատիսյանի տվյալների, հենց նույն Բրիտանիայից 1920թ. 1 միլիոն 200 հազար ֆունտ ստերլինգի արժողության զենք ու հանդերձանք ստացավ:

3. Գործնական քայլեր արվեցին այդ ժամանակի համար արդեն հրատապ դարձող օդուժի կազմակերպման ուղղությամբ: 1919թ. վերջին արդեն հավաքվել էին Ֆրանսիական արտադրության «Վուազեն L. A. S.» տիպի 3 և «Մորան» տիպի 3 ինքնաթիռներ, սակայն երեսապատման համար պահանջվող նյութերի Հայաստանում առկա չլինելու պատճառով երկու տիպի ինքնաթիռներից լիովին պատրաստ էր ընդամենը մեկական նմուշ (ՀՀ ՊԿՊԱ. Ֆ. 276, ց.1, գ. 79, թ.5): Հետաքրքիր է նշել, որ «Վուազեն» տիպի մեկ ինքնաթիռ մասնակցեց վրաց-հայկական պատերազմին: 1919թ. մարտի 1-ին ՀՀ Նախարարների խորհուրդը իր նիստում լսեց զինվորական նախարարի զեկուցումը Ֆրանսիական հրա-

հանգիչներ հրավիրելու և 20-25 զինվորականների օդագնացության արվեստը ուսումնասիրելու համար Ֆրանսիա ուղարկելու մասին։ Նիստը հավանություն տվեց զինվորական նախարարի առաջարկին և նա երաշխավորվեց համապատասխան բանակցություններ վարելու այդ ուղղությամբ (ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 201, ց.1, գ.486, մաս I, թ. 62)։

Ուշագրավ է նաև, որ ՀՀ կառավարությունը որոշակի ուշադրություն դարձրեց նույնիսկ սեփական ծովային նավատորմիղ ստեղծելու հարցերին։ Այդ գործի կազմակերպման նախաձեռնողներից և ռահվիրաներից էին ՀՀ Գլխավոր շտաբի հակահետախուզության բաժնի պետ Հ. Խան-Կոտուրսկին, հետախուզության ղեկավարներից մեկը՝ Ալ. Շնեուրը, որոնց 1919թ. հոկտեմբերի 10-ի, 16-ի, 27-ի դիմումագրերով խնդիր էր դրվում լուրջ հիմքերի վրա դնել ծովային նավատորմ կազմակերպելու գործը՝ այն համարելով հույժ կարևոր պետական գործ, որից կախված է Հայաստանի ապագան (ՀՀ ՊԿՊԱ, ֆ, 199, ց.1, գ.29ա, թ. 215-216)։ 1919թ. հոկտեմբերի 17-ին Սևանա լճում տեղի ունեցավ «Աշոտ Երկաթ» զրահանավի հանդիսավոր գործարկումը (ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 204, ց.1, գ. 132, թ. 166-167)։

Հայկական բանակի ստեղծման ու զարգացման գործընթացն ուղեկցվում էր զգալի դժվարություններով, որին էապես նպաստում էր Վրաստանը, որը Հայաստանի կառավարությանը պարտավորեցրեց ըստ կնքված պայմանագրի Վրաստանին զիջել զենքի ու զինամթերքի շուրջ 27 տոկոսը։ Վրաստանը Հայաստանի առաջ դժվարություններ էր հարուցում նաև՝ անհիմն զորակոչեր անցկացնելով հայերի շրջանում՝ Լոռում, Ախալքալաքում և այլուր։

Բանակի հարցերի նկատմամբ լուրջ վերաբերմունք ունեին Հայաստանի տարածքում գործող քաղաքական կուսակցությունները, որոնք հիմնականում կանգնած էին ազգային դիրքերում և աջակցում էին ՀՀ կառավարությանը ազգային կանոնավոր բանակի ստեղծման գործում։ Այդ մասին էին վկայում Հայաստանի խորհրդի (պառլամենտի) 1919թ. հունվարի 17-ի, հոկտեմբերի և այլ նիստերը, որոնց ընթացքում քննադատամոլության հետ մեկտեղ նաև արվել են առողջ առաջարկներ բանակի ուժեղացման, զինվորների վիճակի բարելավման, այն զենք ու զինամթերքով անխափան մատակարարելու, մարտական ոգին բարձրացնելու ուղղությամբ (Տես ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 198, ց.1, գ.17, թ.70, 77; ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 404, ց.1, գ.36, թ.1, ֆ.4033, ց.7, գ.2, թ.1, գ.17, թ.1)։

Բանակին հատուկ ուշադրություն դարձրեց ՀՀ Դաշնակցության 9-րդ ընդհանուր ժողովը, որը զորքի մասին Դրոյի զեկուցման վերաբերյալ հատուկ որոշում ընդունեց։ Հայաստանի խորհուրդը, կուսակցական խմբավորումները վճռականորեն բողոքեցին 1919թ. ապրիլ-մայիսին Կարսից անգլիացիների կողմից 60-ից ավելի թնդանոթների, շոգեմեքենայի, զենք ու զինամթերքի, ավտոմոբիլային սարքավորման և այլնի դուրս բերման դեմ։

Միաժամանակ պետք է նշել, որ զինվորական գործին ցուցաբերվող առողջ մոտեցումների հետ մեկտեղ երբեմն որոշ կուսակցությունների կողմից նկատվում էին անհիմն, վնասակար դիրքորոշումներ, որոնք չէին բխում առկա աշխարհաքաղաքական իրավիճակի բոլոր գործոնների սթափ հաշվառումից։ Այսպես, 1919թ. հունվարի 7-ին Հայաստանի խորհրդարանի սոցիալ-դեմոկրատական ֆրակցիան, բանավիճելով զինվորական նախարարության կողմից ներկայացված մասնակի զորացրման նախագծի շուրջ կապված երկրի վիճակի որոշ կայունացման և 1918թ. դեկտեմբերին տեղի ունեցած վրաց-հայկական պատերազմի ավարտի հետ, միակողմանի մոտեցում է ցուցաբերում՝ առաջարկելով ունենալ 5-6 հազարանոց լավ հագնված ու լավ սնված զորք, և ոչ թե 16 հազարանոց քաղցած ու տկլոր խուժան, որը սակայն ոչ լիովին հաշվարկված մոտեցում էր սոցիալ-դեմոկրատների կողմից, չնայած իր ռացիոնալ հատիկներին՝ կապված զորքի որակի բարելավման հետ։ Պատճառաբանելով, որ իրենք փոքր ժողովուրդ են և չեն կարող 40-50 հազարանոց բանակ ունենալ, սոցիալ-դեմոկրատական ֆրակցիան վերջիվերջո նույնիսկ առաջարկեց, որ զորքը կազմակերպվի ժողովրդական միլիցիայի սկզբունքով, որը դրսից վերցված և իր դարն ապրած փտած գաղափար էր, պետական քաղաքականության տեսանկյունից վնասակար և անհեռատես մոլորություն։ Ամփոփելով, հարկ է սակայն ընդգծել, որ այնուամենայնիվ կուսակցությունները հայ ժողովրդի համար ճակատագրական պահերին միշտ էլ զորավիգ են եղել հայրենիքին, պետությանը։ 1920թ. աշնանը թուրք-հայկական ճակատագրական պատերազմի ժամանակ կուսակցությունները միասին հանդես եկան հայրենիքի պաշտպանության և ոսոխին արժանի հակահարված տալու վճռականությամբ։



# ՄԱՐԴՈՒ ԻՆՔՆԱՏԻՐԱՊԵՏՄԱՆ, ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԿՅԱՆՔԻ ԻՄԱՍՏԱՎՈՐՄԱՆ ՄԵՐՕՐՅԱ ԽՆԴԻՐՆԵՐԸ

*Ս. Համբարձումյան*

Մենք ամենքս ձգտում ենք մի բանի՝ ապրել որքան կարելի է երկար, պահպանելով լավ առողջություն, տոկունություն, ակտիվություն, որպեսզի ի վիճակի լինենք արդյունավետորեն զբաղվել սիրած գործով և փաստորեն ստեղծել երջանիկ կյանքի պայմաններ ու իմաստավորել մեր անձնական կյանքը՝ մարդասիրական առումով, ազգանպաստ մտահոգությամբ։

Եթե մարդը կարողանա ապահովել ինքնատիրապետման և ինքնակառավարման անհրաժեշտ կանոններն ու պայմանները, ապա մինչև իր կյանքի վերջը չի տառապի որևէ հիվանդությամբ, մարսողական խանգարումներից, կպահպանի լավ տեսողություն, լսողություն, լավ մտավոր և ֆիզիկական կարողություններ։

Մարդը՝ լինելով բնության միակ՝ բանականությամբ օժտված արարածը, վստահորեն հակված է հակադրվելու բնությանը և ապրելու, կենդանիների կյանքի օրենքներից զգալիորեն տարբերվող իրեն հարիր օրենքներով։ Մարդը, գիտակցելով ծխելու և գինեմոլության վնասակարությունը, շարունակում է ծխել, տարվել ալկոհոլամոլությամբ, խախտում է սնվելու, աշխատանքի և հանգստի ռեժիմը։ Անկանոն ապրելակերպի հետևանքով թերանում է օրգանիզմի՝ տարբեր հիվանդությունների կանխարգելման ինքնատիրապետման կարողությունը։

Մարդիկ սովոր են կարծել, որ եթե օրվա ընթացքում գոնե մեկ անգամ չուտեն, նրանց հետ ինչ-որ սարսափելի բան կկատարվի։ Այնինչ օրգանիզմն ունի պաշարներ, որոնց հաշվին կարող է պահպանել իր գոյությունը՝ միջին տևողության հիվանդության ընթացքում հարկադրական քաղցի դիմելով։

Կամային հատկություններով և ինքնակառավարման կարողությամբ օժտված մարդիկ ընդունակ են իրենց աշխատունակության ժամկետը երկարացնել, վերընթաց և վարընթաց գծերի հատումը հիսունի փոխարեն հասցնել ութսունի։ Այդ մարդը կարող է առավել աշխատունակ լինել 60-80 տարեկան հասակում, այսինքն, երբ նրա մտավոր կարողությունները և կենսունակությունը գտնվում են լավագույն վիճակում, և, իհարկե, հանդես են գալիս օրգանիզմի ֆիզիկական հատկությունների հետ համագործակցած։

Օրգանիզմի զարգացման և ամրապնդման համար գոյություն ունի երկու հիմնական ուղղություն։ Առաջինը՝ մարդուն շրջապատող միջավայրի առողջացումն է՝ նրա կյանքի և աշխատանքի համար առողջ պայմանների ստեղծումը։

Առողջության ամրապնդման մյուս ուղղությունը՝ օրգանիզմի այն հատկությունների բազմակողմանի զարգացումն ու կատարելագործումն է, որոնք հնարավորություն են տալիս նրան համակերպվելու արտաքին միջավայրի տարբեր ազդակներին (ցուրտ, քամի, խոնավություն), աշխատանքի և կենցաղի բազմազան պայմաններին։ Այդպիսի հատկություններով կարող է օժտված լինել ֆիզիկապես կոփված ու ամրակազմ օրգանիզմը, իսկ դրա նախապայմանները շատ են ու բազմազան (ճիշտ ապրելակերպ, ֆիզիկական կուլտուրա, ռացիոնալ սնունդ և այլն)։

Ֆիզիկապես լավ մարզված մարդկանց սիրտն աշխատում է համեմատաբար դանդաղ և զարկերակային արյան ճնշումն էլ պահպանվում է նորմայի սահմաններում։

Եռանդագին աշխատանքով զբաղվելու և կամքի ուժի հետ են կապված մարդու աշխատասիրությունն ու բարձր աշխատունակությունը։ Աշխատասիրությունը, այսինքն՝ գործի նկատմամբ սերը, հանդիսանում է աշխատունակության հիմքը, իսկ աշխատունակությունը՝ ընդունակությունների դրսևորման և զարգացման կարևոր պայմանը։

Անձի ներքին ուժերի, նրա նախադրյալների ու դրդապատճառների իրականացումը, կենսական մարմնավորումն ընդունված է անվանել ինքնահաստատում կամ ինքնիրականացում։

Կյանքի իմաստի որոնումը և այս ճանապարհին սուբյեկտիվ նշանակություն ունեցող արժեքների ձևավորումը կապված են նաև անձի հոգեկան հասունության մակարդակի հետ։

Հաջողակը այն մարդն է, որը համարձակ նայում է դեպի ապագան և ձգտում է հասնել նրան։ Նա որևէ գործ է ձեռնարկում հանուն բոլոր մարդկանց կյանքի ուրախության։

Կյանքի իմաստավորումը համընդհանուր շահերով պայմանավորող անհատը գործունյա է, կամային: Նրա էությունում ամենից առաջ աչքի է ընկնում երևակայության կապը կամքի, տոկուն բնավորության, մարդու արարքների ու ձգտումների անանձնական, բարձր գաղափարայնության հետ:

## РОЛЬ КОНФУЦИАНСТВА В ПОЛИТИЧЕСКОЙ СИСТЕМЕ ИМПЕРАТОРСКОГО КИТАЯ

*М. Оганесян*

Конфуцианство - китайское учение, сыгравшее исключительно важную роль как в истории китайской культуры, так и в социально-политической истории Китая. Само слово " конфуцианство" - европейского происхождения. Его китайский эквивалент - "Жу цзяо" означает "учение благовоспитанных (или просвещенных) людей", вследствие чего конфуцианство часто называют "религией ученых". Сам Конфуций (551-479 гг. до н.э.) не учил вере в сверхъестественное, напротив, он говорил: " Не знаем, что такое жизнь, как же можем знать, что такое смерть, Не знаем, как служить людям, как же мы можем служить божествам". На этом основании его часто называют агностиком.

Конфуцианство по праву стоит на одной стезе с другими великими религиозно-философскими учениями и традициями Востока. Именно оно оказало огромное воздействие на систему ценностей традиционного Китая и этнопсихологию китайского народа, являясь (с рубежа II-I вв. до н.э. и до свержения монархии в 1911 г.) официальной идеологией китайской империи, выполняя по существу в обществе те же функции, что и государственные религии в других культурах.

Европейское название это учение получило от латинизированной формы фамилии и титула своего основателя (Конфуций от Кун Фу-цзы, т.е. Мудрый учитель Кун). Собственно китайское имя Конфуция - Кун Цю или Кун Чжунни: в Китае его часто называют Кун-цзы-философ Кун.

